այս սրահի արևելյան պատնեշը։ Հետևապես, այդ խաչքարերը կանգնեցրել են այն ժամանակ, երբ արդեն կար այս սրահը։ Այդ խաչքարերից մեկն ունի սարկավագադիր տոմարի Ծե (55) թվականը, որ մերով ստացվում է 1139 թիվը։ Այդ նշանակում է, որ այս սրահն արդեն գոյություն ուներ 1139 թվականին։

Թե ինչ նպատակի է ծառայել իր կառուցման սկզբնական ժամանակներում, այժմ դժվար է որոշակի բան ասել, բայց հետագայում, մեծ ժամատունը նրան միանալուց հետո, այս սրահը ևս դարձել է գերեզմանատեղի, որի հատակն այսօր համատարած կերպով ծածկված է 13-րդ և հետագա դարերի տապանաքարերով։

Նկ. 10. Մեծ ժամատան ներքին այունաշարքերը հս կողմից։

6. Զանգակատուն։ Առանձին կառուցված եռահարկ բարձրադիր մի շենք է, որ գտնվում է մեծ ժամատան հարավային կողքին։ Շինության վերաբերող արձանագրությունը նախապես գրված է եղել զանգակատան ներսում, երրորդ հարկի մեջ, իրար կողքի կառուցած երեք մատուռների ճակատին սև ներկով, որ այժմ խիստ կերպով եղծված է և միայն մի քանի գրեր են երևում տեղում (արձ. 105)։ Նույն արձանագրությունը կրկնել են փորագիր գրերով հարավային խորանի մուտքի ճակատին, որը լավ է պահպանվել։ Այդ արձանագրությունը թվական չունի, բայց նրանից տեղեկանում ենք, որ զանգակատունը շինել է Աբասի որդի Վագը և օրհնել է նրա արյան մերձավոր Սաթը։ Վերջինիս եկեղեցական կոչումը հայտնի չէ, ուստի պետք է ենթադրենք, որ նա ոչ թե եկեղեցական է եղել և ինքն է օրհնել զանգակատունը, այլ իր ծախսով է օրհնել տվել վանքի հոգևորականներին (արձ. 102)[1]։

Զանգակատունը, կարծում ենք, կառուցված պետք է լինի 12-րդ դարի վերջերին կամ 13-ի սկզբներին։ Նորոգվել է 1652 թվականին Սարգիս եպիսկոպոսի նախաձեռնությամբ, վանքի ընդհանուր նորոգության

[1] Ի. Հարությունյանը թեև հրատարակել է այս արձանագրությունը, բայց զանգակատան մասին գրել է՝ «ո՛չ շինության ժամանակն է հայտնի և ո՛չ էլ շինողի անունը»։ Տե՛ս «Ազգագրական հանդես», Գ գիրք, էջ 301։